ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ, Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրա նական գրականության մեջ, Ե., «Լուսակն» հրատ., 2010, 169 էջ:



2010 թ. լույս տեսավ Լ. Սաֆրաստյանի ուսումնասիրությունը՝ նվիրված պարսից ժամանակակից արձակի կարևոր միտումներից մեկին՝ կնոջ հիմնահարցերի քննությանը: Հարցադրումը ժամանակակից քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրքրությունների և ուսումնասիրությունների ծիրում է և արտացոլում է «ֆեմինիզմ», «գենդերային հարաբերություններ» խնդիրները:

Ընդհանրապես ֆեմինիստական շարժումը, հատկապես վերջին տասնամյակներում մեծ թափ ստացած արմատական ֆեմինիզմը, մենք կանվանեինք ուշացած պատասխան անտիֆեմինիզմին, որտեղ գործում է «ծայրահեղությանը ծայրահեղությամբ» պատասխանելու միտումը:

Անտիֆեմինիզմը գալիս է հին աշխարհից, ամենադրամատիկ դրսևորումներով անցնում ողջ միջնադարով և տարբեր քաղաքակրթական աշխարհներում տարբեր դրսևորումներ ստանալով՝ հասնում մինչև մեր օրերը: Ակնհայտ է հարցադրման արդիականությունը, նաև այն, որ աշխատությունը լրացնում է հայ իրանագիտության մեջ չարծարծված և չուսումնասիրված պարսից գրականության կարևոր շրջանի բացը:

Գրքի առաջին գլխում քննարկվում են իրանական մինչհեղափոխական շրջանի վերջին տասնամյակի (1960-1970 թթ.) գրական միտումները հատկապես կանանց հիմնահարցերի ավանդական ընկալումները նոր դարագլխի շեմին:

Հեղինակը դեռևս 60-ականին շահական Իրանում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական, նաև բարոյահոգեբանական զարգացումների խորքի վրա լուսաբանում է արձակում ձևավորվող ֆեմինիստական գաղափարներն ու ըմբռնումները՝ կապված իրանցի կնոջ՝ հասարակության մեջ ունեցած կարգավիճակի հետ: Փաստական նյութի հիման վրա արժևորվում է Իրանում տեղական առաջադիմական մամուլի, ինչպես նաև շահական ազատամիտ քաղաքականության հետևանք հանդիսացող արևմտյան գրողների ազդեցության դերը հատկապես կանանց հիմնախնդիրներն առավել համակարգված և հետևողական դարձնելու խնդրում: Լ. Սաֆրաստյանի կողմից շրջանառության մեջ դրված նյութը շեշտադրում է պարսից նոր և նորագույն գրականության թե՛ ժանրային, թե՛ թեմատիկ բազմազանության լայնույթը:

Պարսիկ կնոջ կերպարը համաշխարհային հանրությանը ներկայացնող Սադեղ Հեդայաթի, Սադեղ Չուբաքի, Ջալալ ալ Ահմադի կողքին կանգնում են կին գրողներ Սիմին Դանեշվարը, Սիմին Բեհբեհանին, Ֆորուղ Ֆառռոխզադը և այլք, որոնք մարտահրավեր են նետում «անդրոցենտրիկ» հասարակության ավանդույթներին, օրենքներին և կարծրատիպերին: Ինչ վերաբերում է գրական զարգացումներին, ապա վերլուծության շնոր-

հիվ պարզ է դառնում, որ 60-70-ական թթ. կայացած պատմվածքի ժանրը չի ծածկում հետհեղափոխական կենսաձևի արդյունք հանդիսացող բազմաթիվ խնդիրներ: Այսպիսով, ժամանակի հրամայականն է դառնում ժանրային համակարգում որոշ ձևերի (ակնարկներ, հուշագրություններ, վիպագրություն) ակտիվացումը:

Գաղտնիք չէ, որ կնոջ վիճակն իսլամում ավանդականորեն եղել է իսլամի քննադատության ակնառու իրողություններից մեկը: Կանանց կողմից իսլամական քող կրել-չկրելու խնդիրը կարծես մի չափանիշ լիներ Իրանում ֆեմինիզմի կայացման աստիճանը որոշելու համար: Սակայն դա խնդրի միայն ձևական կողմն էր: Հենց քողի պարտադրանքից ազատ կինն էր, որ շահական Իրանի ժամանակաշրջանի ռեալիստական արձակի հոգեբանական դրվագներում (Ջալալ ալ Ահմադ, Սադեղ Չուբաք, Ղոլամհոսեին Սաեդի) մեզ է ներկայանում որպես անկամ, անպաշտպան, հոգեպես և ֆիզիոլոգիապես չբավարարված, մենակ ու կամազուրկ մեկը: Վիճակ, որ մենք կասեինք, նրանց դուրս էր դնում անհատականության և սեփական սեռի ինքնագիտակցումից՝ դարձնելով միայն կենսաբանական երևույթ: Այդ շրջանի արձակի քննությունը հեղինակին հանգեցրել է այն եզրակացության, որ կանանց հիմնահարցերը գրողների կողմից գիտակցվում և ներկայացվում էին որպես սոցիալական խնդիրների անբաժանելի մաս: 70-ականի կին արձակագիրները նույնպես (Գոլի Թարաղի, Դանեշվար, Ամիրշահի) այրակենտրոն հասարակության մեջ իրանցի ավանդապահ կնոջ՝ մեղմ ասած անհարմարավետ վիճակն ու նրա անլուծելի խնդիրները նախորդ գրողների պես տեսնում էին սոցիալականի հետ փոխկապակցված: Այդ պարադիգմը շեշտել է ատենախոսը՝ համերաշխ՝ ամերիկացի հետազոտող Քամրան Թալաթովի եզրահանգմանը, որ «…նախահեղափոխական շրջանի պարսիկ կին գրողների ստեղծագործությունները չունեն գենդերային ինքնություն» (էջ 47):

Շահական ամերիկամետ ազատամիտ քաղաքականությունից և նրա կողմից արդիականացման՝ արևմտյան մոդելի յուրացումից հետո իսլամական հեղափոխությունը ոչ միայն պատմաքաղաքակրթական կտրուկ տեղաշարժ էր, այլև իսլամական սկզբի նորովի ընկալում: Իսլամական հեղափոխությունը խորապես փոխակերպեց ողջ հասարակական կենսաձևը՝ հին վարչակարգը, պետական-քաղաքական համակարգը: Այն ձևավորում էր նոր կողմնորոշումներ, նոր արժեքներ և կայացնում էր, եթե կարելի է ասել, իրանական սփյուռքը: Վտարանդիության թեման իր արտահայտման համար թելադրում էր առավել ճկուն ժանրային ձևեր: «Արդի իրանական արձակի բազմաբովանդակ թեմատիկայի մեջ առանձնակի հընչեղություն ստացան վտարանդիության և նրա հետ սերտորեն առնչվող՝ ազգային, մշակութային, կրոնական, գենդերային ինքնության պահպանման խնդիրները, որոնք իրենց արձագանքը գտան ակնարկային ժանրաձևերի, հատկապես հուշագրությունների մեջ» (էջ 102):

Անկախ իսլամում մոդեռնիզացիա իրականացնող տեսաբանների ջանքերից՝ միևնույն է, վերջին հեղափոխությունը իրանցի կնոջը կրկին կանգնեցրեց իսլամական աշխարհի օրենքներին՝ բարոյահոգեբանական, ինչպես նաև էսթետիկական (արտաքին հարդարանք) պարտադրանքին դեմ հանդիման: Զարմանալի չէ, որ հետհեղափոխական իրանական արձակում կնոջ հիմնախնդիրները դարձան առավել անսքող և անզիջում: Դեռևս 70-ականին ստեղծագործող բազմաթիվ գրողների վիճակված էր ապրել և ստեղծագործել «նոր» լսարանի պահանջների օրոք: Այսպիսով, աշխատության երկրորդ գլխի վերլուծության թանձրույթը արդի Իրանի կրոնապետական համակարգում առկա ֆեմինիստական շարժման հիմնա-

կան ուղղությունների (իսլամական և աշխարհիկ, էջ 149) տարբերակումն ու մեկնաբանումն է:

Դժվար է գնահատական տալ զարգացման ընթացքի մեջ գտնվող, չբյուրեղացած և գրականության պատմության մեջ դեռևս իր հաստատուն տեղը չզբաղեցրած գրական ուղղվածությանը, սակայն հետազոտության ժամանակագրական տիրույթի (1960-1990 թթ.) շրջանակում շահական և հետհեղափոխական արձակի նյութի պատմահամեմատական քննությամբ ատենախոսին հաջողվել է ցույց տալ կանանց խնդիրների հարցում շեշտադրումների ակնառու փոփոխությունը, ավանդական արժեքների և կողմնորոշումների վերանայումը, վաղվա գրական զարգացումների կետագիծը:

Գրքի չորրորդ գլուխը նվիրված է հանրահայտ գրող, ավանգարդի ջատագով Շահրնուշ Փարսիփուրի արձակին, որը կարելի է համարել հեղինակի երջանիկ «հայտնագործությունը»: Հեղինակն ԱՄՆ-ում անձամբ ծանոթացել է նրա հետ, քննարկել իրեն հետաքրքրող խնդիրները, նրանից առաջին անգամ ստացել արտերկրում բազմիցս թարգմանված «Թուբան ու գիշերվա խորհուրդը» և «Կանայք առանց տղամարդկանց» վեպերը: Փաստորեն ճշմարիտ աղբյուրից են բխում հեղինակի վերլուծություններն ու եզրակացությունները՝ կապված Փարսիփուրի գրական մեթոդի, կենսափիլիսոփայության, այլախոհական և ազատամտական հայացքների, ինչպես նաև արևմտյան գրական ազդեցությունների հետ: Նրա արձակում շեշտադրվում է հասարակության մեջ իշխող այն բարոյահոգեբանական միջավայրը, որը օտարում է անհատականությանը, ստիպում հեռանալ իրականությունից և ապրել ցնորքների աշխարհում: Եվ ոչ միայն ապրել, այլ նույնիսկ կերպարանափոխվել: Դա հոգեվերլուծության մեջ կոչվում է «փախուստ», մի վիճակ, որի մեջ է ինքը՝ արձակագիրը: «Կանայք առանց տղամարդկանց» ստեղծագործության կին հերոսների փախուստը կարելի է մեկնաբանել տարբեր կտրվածքներով՝ սոցիալական, աշխարհագրական, բարոյահոգեբանական, սեռային: Նրանք փոխակերպվում են լույսի, ծառի և այլն: Կերպարանափոխության և վերածննդի ֆենոմենում հեղինակը նկատում է արևելյան փիլիսոփայության որոշ տարրերի արտացոլումը (էջ 146):

Լ. Սաֆրաստյանը նշում է մոգական ռեալիզմի մեթոդի կարևորությունը հերոսների բազմաբնույթ վիճակների նկարագրության համար. «Օգտագործելով լատինաամերիկյան վեպին բնորոշ մոգական ռեալիզմի փորձը, հեղինակը վերացնում է երևակայության և իրականության միջև գտնվող սահմանագիծը՝ դիպաշարը կառուցելով տեսլային և իրական պատկերների ներհյուսմամբ» (էջ 141):

Ողջ աշխատության մեջ ակնհայտ է Ֆորուղ Ֆառռոխզադի ներկայությունը, որի պոեզիային հեղինակն անդրադառնում է որպես ֆեմինիզմի դրսևորման չափանիշի: Իրավամբ, անհնար է քննել իրանական ֆեմինիզմի զարգացումները՝ շրջանցելով Ֆառռոխզադին, որի ազատախոհ միտքը բացեիբաց մերժում էր հասարակական կարծիք ստեղծող ինստիտուտները (օրինակ՝ադաթը): Հայտնի է, որ XX դ. պարսից պոեզիայում Ֆառռոխզադը արմատավորեց կնոջ ազատության և սեփական մարմնի տերը լինելու, բնության և ոչ թե կրոնի օրենքներով ապրելու գաղափարները: Փաստորեն Ֆառռոխզադի պոեզիան անընդհատ համեմատության մեջ պահելը հեղինակի սկզբունքային մոտեցումն է, որը նաև տեսանելի է դարձնում պարսից ժամանակակից գրականության մեջ տարբեր ժանրերի զարգացումների միասնականությունը:

Հետաքրքիր կլիներ, եթե Լ. Սաֆրաստյանը համեմատեր Փարսիփուրի և Կաֆկայի հերոսների (Գրեգոր Զամզա) մետամորֆոզները և՛ հզոր ալեգորիայի ընդհանրության, և՛ երկու հեղինակների հակադիր (ողբերգական ու լավատեսական) լուծումների տարբերության տեսակետից:

Կարծում ենք՝ չէր խանգարի հեղինակային մի հպանցիկ անդրադարձը XX դ. դարասկզբի բանաստեղծ Իրաջ Միրզայի պոեզիային, որը, գուցե, գիտակցված ֆեմինիզմի առաջնեկներից մեկն էր: Նա մեծարեց պարսիկ կնոջը, գնահատեց նրա դերը և զորավիգ եղավ նրա ձգտումներին «Չադրա», «Գիրք չադրայի մասին», «Մայրս» և «Մոր սիրտը» ստեղծագործություններում:

Լիլիթ Սաֆրաստյանի «Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրանական գրականության մեջ» աշխատությունը գիտական շրջանառության մեջ է դնում տարբեր լեզուներով գրված տեսական և փաստական նյութը: Այն հայ իրանագիտության մեջ նոր խոսք է Իրանում ֆեմինիստական գրականության զարգացումների, գենդերային հարաբերությունների և սոցիալական կենսաձևի զգայուն փոխկապակցվածության, ինչպես նաև արդի գրական ժանրային համակարգում այդ խնդիրների տեղի և դերի մասին: Ի դեպ, հետհեղափոխական պարսից արձակը սակավ է ուսումնասիրված նաև ռուս իրանագիտության մեջ: Այդ է պատճառը, որ ուզում ենք նշել աշխատանքի ներդրումային դերը հայ իրանագիտության և ընդհանրապես հարևան իսլամական գրականությունների զարգացման խընդիրների բնագավառում:

ԿՈԶՄՈՅԱՆ Ա. Կ.
Բանասիրական գիտությունների դոկտոր